Եզ 1816

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«23» 02 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 022 - 24

Ձեռնարկողը՝ ***«Մուրադյանս» ՍՊԸ***
Քաղաք Երևան, Ռոստովյան 34, բն. 26

Գործունեությունը՝ ***Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Արևելյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 5 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 022 - 24

«23» փետրվարի **2024թ.**

Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Արևելյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Մուրադյանս» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Հառիճ բնակավայր

Ներածական մաս. Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի արևելյան տեղամասը գտնվում է Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հառիճ բնակավայրի վարչական տարածքում, Արթիկ քաղաքից 1կմ արևելք, Հառիճ գյուղից 380մ արևմուտք, Սարալանջ գյուղից շուրջ 2կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքը ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերով:

Հայցվող տեղամասի որոշ հատված ժամանակին խախտվել է նախկին ընդերքօգտագործողների կողմից, ինչի արդյունքում հայցվող տեղամասի կենտրոնական հատվածում առկա են անկանոն կազմակերպված լցակույտեր, որոնք շահագործման աշխատանքներին զուգահեռ կհեռացվեն և կօգտագործվեն ընկերության արդյունահանման աշխատանքներից հետո ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրի Արևելյան տեղամասի տուֆերի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ պաշարների պետական հանձնաժողովի կողմից 20.02.1974թ.-ի N7111 արձանագրությամբ, հետևյալ կարգերով և քանակներով՝ A կարգով՝ 12869.6, B կարգով՝

15875.5, C_1 կարգով՝ 43902.8, A + B + C_1 կարգերով՝ 72647.9 հազ.մ^3: Ուղիղ կտրվածքի քարերի ելքը կազմում է 40%:

Բացահանքի վերջնական եզրագծում ընդգրկվել է հանքավայրի պաշարների XV-A և XV'-B հաշվարկային բլոկներից՝ 416448.0մ^3 տուֆի մարվող պաշար, այդ թվում՝ ըստ A կարգի՝ 383160.0մ^3, ըստ B կարգի՝ 33288.0մ^3: Տուֆերի արդյունահանվող պաշարը կազմում է 388546.0մ^3, մակաբացման ապարների ծավալը՝ 89745.0մ^3, որից հողաբուսական շերտինը՝ 13950.0մ^3: Օգտակար հանածոյի տարեկան արդյունահանվող ծավալը կազմում է 19428.0մ^3: Նշված պաշարները կապահովեն բացահանքի աշխատանքը 20 տարիների ընթացքում:

Հայցվող տարածքի մակերեսը կազմում է 5.38 հա:

Ընդհանուր բացահանքային կորուստները կազմում են 27902.0մ^3 կամ 6.7%:

Տեղամասի տուֆերն իրենց որակական հատկություններով համապատասխանում են «Блоки из горных пород для производства облицовочных архитектурно-строительних мемориальных и других изделии» 9479-98 ГОСТ-ի և «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-95 ՀՍՏ-ի պահանջներին և կարող են օգտագործվել ինչպես երեսպատման, այնպես էլ շինարարական քարերի արդյունահանման նպատակով:

Տեղամասի անկյունային կետերի կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են:

	x	y
1	4498431.1782	8414574.3965
2	4498500.9000	8414660.4000
3	4498623.9000	8414675.5000
4	4498628.2000	8414690.1000
5	4498626.0000	8414725.0000
6	4498613.0000	8414770.0000
7	4498588.0000	8414798.0000
8	4498559.0000	8414851.0000
9	4498549.3979	8414874.2956
10	4498450.7162	8414824.5496
11	4498334.8300	8414820.4541
12	4498295.0829	8414745.2566
13	4498344.6000	8414699.5000
14	4498374.6333	8414664.9842
15	4498420.0000	8414596.0000

Նախագծվող բացահանքի պարամետրերն են՝

- Առավելագույն երկարությունը – 262.0մ:
- Առավելագույն լայնությունը – 211.0մ:
- Աշխատանքային հանքաստիճանի բարձրությունը - 0.42մ:
- Մարված հանքաստիճանի թեքման անկյունը – 90^0:
- Աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը - 14մ:
- Մշակման առավելագույն խորությունը – 24մ:

Տարեկան մարվող տուֆային զանգվածի ծավալն ընդունվում է 20823.0մ^3:

Հանքավայրը նախատեսվում է շահագործել բաց լեռնային աշխատանքներով, միակողմանի՝ վերևից-ներքև խորացումով մշակման համակարգով: Արդյունահանված օգտակար հանածոն իրացվելու է տեղում, սպառողի տրանսպորտային միջոցներով:

Տուֆերի արդյունահանումը նախատեսվում է իրականացնել մեխանիզացված եղանակով, CMP-026 մակնիշի քարհատ մեքենաների միջոցով:

Լեռնակապիտալ աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել բացահանքի արևմտյան մասով անցնող մերձատար ավտոճանապարհի կարգաբերում:

Մակաբացման ապարները՝ 89745.0մ^3 ծավալով, ներկայացված են հողաբուսական շերտով 13950.0մ^3, ժամանակակից առաջացումներով և հողմահարված տուֆերով 75795մ^3: Արտադրական թափոնների ծավալը կազմում է 233128.0մ^3: Մակաբացման ապարները, ինչպես նաև հողաբուսական շերտը պահեստավորվում են բացահանքի տարածքից դուրս, արտաքին լցակույտերում, արտադրական թափոնները և մակաբացման ապարները միասին՝ բացահանքի արևմտյան թևում, իսկ հողաբուսական շերտի ապարների լցակույտը՝ բացահանքի հարավ-արևմտյան հատվածում, առանձին լցակույտերով: Մակաբացման ապարների հեռացումը կատարվում է բուլդոզեր–էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով: Մակաբացման ապարների և արտադրական թափոնների լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է մոտ 2.5հա, միջին բարձրությունը 10մ: Հողային շերտի լցակույտի զբաղեցրած տարածքը՝ 0.3հա, բարձրությունը՝ 5մ:

Ուղիղ կտրվածքի քարերի արդյունահանման ժամանակ առաջացած արտադրական թափոնները, 11656.0մ^3/տարի ծավալով, HITACHI ZX400LCH-3 բուլդոզերով տեղափոխվում EN 5-10մ հեռավորության վրա և կուտակվում: Այնուհետև կուտակված թափոնները JCB 3CX մակնիշի էքսկավատորով բարձվում են 6.0մ^3 թափքի տարողությամբ KAMAZ 5511 ավտոինքնաթափի մեջ և տեղափոխվում արտաքին լցակույտ, որը տեղադրվելու է բացահանքի եզրագծից դուրս, նրա արևմտյան հատվածում: Տեղափոխման միջին հեռավորությունն ընդունվում է 0.15կմ:

Պինդ կենցաղային աղբը կուտակվելու է տարածքում առկա աղբամանների մեջ:

Էլեկտրաէներգիայի մատակարարումը նախատեսվում է կատարել լիակազմ արտաքին տեղակայման բարձր ԿՏՊ-160-10/4 ԿՎտ հզորության 1 հատ տրանսֆորմատորային ենթակայանից:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշենստեցման նպատակով աշխատանքային հրապարակների, ավտոճանապարհների և լցակույտի մակերևույթի ջրման համար:

Խմելու ջուրը նախատեսվում է բերել կցովի ջրի ցիստեռնով: Տեխնիկական ջուրը մատակարարվելու է ջրցան լվացող ավտոմեքենայով:

Համաձայն հանքավայրի ջրաերկրաբանական պայմանների՝ ստորգետնյա ջրերը հանքավայրի տարածքում բացակայում են: Բացահանքի տարածք թափվող հորդ անձրևային ջրերի մի մասը ներծծվում են բացահանքի հատակի ապարների ծակոտիների և ճեղքերի միջով, իսկ մյուս մասը հեռանում է ինքնահոս կերպով:

Կեղտաջրեր առաջանում են միայն խմելու կենցաղային ջրօգտագործման արդյունքում: Կենցաղային կեղտաջրերը՝ օրական 0.35մ^3 ծավալով, լցվելու են բետոնային լցարան, որտեղից

պարբերաբար նախատեսվում է տեղափոխել մասնագիտացված կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության հայցվող տարածքում կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի շրջանում չկան բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքներ: Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը բնակավայրերից, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը Հառիճ բնակավայրի տարածքում կգտնվի նորմայի սահմաններում:

Բացահանքի շահագործման աշխատանքների ավարտին նախատեսվում է կատարել բացահանքի մշակված տարածքի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա՝ 8.24հա մակերեսով:

Լեռնային աշխատանքների հետևանքով խախտված հողերի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի համար կհատկացվի 1225.6 հազ.դրամ: Կենսաբանական ռեկուլտիվացիայի համար կհատկացվի 2060.0 հազ.դրամ: Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 3285.6 հազ. դրամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ.դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Փոշենստեցումը նվազեցնելու նպատակով տարվա չոր և շոգ եղանակին նախատեսվում է կատարել ջրցան՝ օրը 3 անգամ:

-Բացահանքում աշխատող տեխնիկական միջոցները և շարժիչները պետք է լինեն կարգավորված՝ անսարք մեքենաների շահագործումը բացահանքում պետք է արգելվի:

-Մեքենաների շարժիչների գազերի արտանետման վրա պետք է տեղադրված լինեն կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ կտա կրճատել գազերի արտանետումը մթնոլորտ:

- Հանքում գտնվող էլեկտրական ենթակայանը պետք է համալրված լինի հակահրդեհային սարքավորումներով: Բոլոր այն սարքավորումները, որոնք չունեն ավտոման հակահրդեհային սարքավորումներ, պետք է ունենան ձեռքի կրակմարիչներ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Արևելյան տեղամասի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հառիճ բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Շիրակի մարզպետարանը: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

-Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

- Բացահանքի շահագործման ընթացքում ներգրավել Արթիկ համայնքի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել համայնքային բյուջե ֆինանսական ներդրումներն ու անհրաժեշտ օգնության ծրագրերը:

-Անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

-Արդյունահանվող տարածքներից հողային շերտի հեռացումը և դրա պահպանումը բացահանքի տարածքից անհրաժեշտ է կատարել է ՀՀ կառավարության 2011թ-ի սեպտեմբերի 8-ի թիվ 1396-ն և Կառավարության 2017թ-ի նոյեմբերի 2-ի թիվ 1404-ն որոշումների պահանջներին համապատասխան:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մուրադյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Արևելյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան